«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը դասավանդման ընթացքում

Առարկա՝ Անգլերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Միլվա Հովհաննիսյան

Ուսումնական հաստատություն՝ հ. 157 հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... 3

Գլուխ.1 Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը անգլերենի դասավանդման ընթացքում:

1.1 Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողական վարքագծի դրսևորումները դպրոցում 6

1.2 Սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացումը անգլերենի դասավանդման ընթացքում 12

Եզրակացություններ..... 16

Առաջարկություններ 17

Օգտագործված գրականության ցանկ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից կրթության զարգացումը համաշխարհային մակարդակի, բազմակողմանի, լայնամասշտաբ գործընթաց է: Կրթությունը անընդհատ վերափոխվում է, կատարելագործում բովանդակությունը՝ ձգտելով մոտենալ տեխնիկական և տեխնոլոգիական հեղափոխության արդի դարաշրջանի սոցիալական, քաղաքական և մանկավարժական պահանջներին: Համաշխարհային մանկավարժության և դպրոցի զարգացման կարևոր դրական միտումներից են՝ կրթության հումանացումը, անձնակողմնորոշված մոտեցման ապահովումը:

Աշխարհում արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգերի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ և նոր պահանջմունքներ: Գիտատեխնիկական առաջընթացի աննախադեպ արագության, բարձր տեխնոլոգիաների ներդրման պայմաններում կրթական ոլորտը ամենօրյա ռեժիմով կարիք ունի բարեփոխումների ու արդիականացման, ընդ որում՝ ոչ միայն դասավանդողներն են զինվում համապատասխան նոր մեթոդամանկավարժական զինանոցով, այլև գնալով փոխվում է նաև սովորողի դերակատարումը. վերջինս ևս հնարավորություն է ստանում դուրս գալ կաղապարներից ու ավանդական կարծրատիպերից՝ դառնալով հետազոտող, վերլուծող, քննադատող, փնտրող, սովորեցնող, կշռադատող:

Այս բոլոր ունակությունների ամբողջությունը սովորողին դարձնում է ինքնուրույն իր որոշումների մեջ, նախաձեռնող կրթության և կյանքի այլ ասպեկտներում, ինչպես նաև հնարավորություն է տալիս զարգանալ, կյանքի իրողություններին մոտենալ ստեղծագործաբար, ինքնակրթվել ու ամբարել կայուն գիտելիք ինչպես կրթական պարտադիր ծրագրով նախատեսված առարկաներից, այնպես էլ թիրախային տեղեկատվական հոսքերը կառավարել՝ արդյունքում բավարարելով սեփական հետաքրքրությունները, այդ թվում՝ գիտության, արվեստի, մշակույթի մասին սեփական եզրահանգումներն անելով:

Ստացվում է, որ նոր ինտերակտիվ մեթոդների ներդրումը հնարավորություն է տալիս սովորողին դառնալ դասի ընթացքի անմիջական ճաարտարապետը, ինչի արդյունքում բուն դասապրոցեսը դադարում է սովորողի համար լինել ձանձրալի, ավելին՝ սովորողը մոտիվացվում է, իսկ այդ մոտիվացիայի պատճառներից մեկն էլ աշակերտակենտրոն ուսուցումն է:

Փաստորեն, կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը

պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և սովորողի դերի ու գործառույթների վերաարժևորում:

Նմանօրինակ նորարարական, մեթոդամանկավարժական հետաքրքիր հնարներով հագեցած դաս սովորողը պահանջում է բոլոր առարկաները դասավանդող ուսուցիչներից՝ այդ թվում անգլերենի, ուստի կարևոր է, որ անգլերենի ուսուցիչը նույնպես ունենա այն մասնագիտական որակները , որոնց արդյունքում կզարգանա սովորողի ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը:

Հետազոտության թեմայի արդիականությունը.

Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգի բարեփոխումների արդի շրջափուլում կրթական չափորոշչով սահմանված վերջնարդյունքներով, համաձայն որոնց՝ ուսուցիչն ամեն կերպ պետք է խթանի սովորողի ինքնուրույն մտածելու, կշռադատելու, որպես նախաձեռնող հանդես գալու, ստեղծագործական մտածելու կարողունակությունները՝ ամեն կերպ զերծ պահելով սովորողին մեխանիկական վերարտադրումից:

Հետազոտության նպատակը.

Շեշտադրել աշակերտակենտրոն դասի կարևորությունը՝ որպես կրթության որակի բարձրացման հիմնական նախապայման, այդ գործընթացում կարևորել ուսուցիչ-աշակերտ համագործակցությունը, ինչպես նաև ուսուցչի ֆունկցիոնալ դերը սովորողի ինքնուրույնության, ստեղծարարության ու նախաձեռնողականության դրսևորումների որակի բարձրացման համատեքստում:

Հետազոտության խնդիրը.

Հետազոտության խնդիրն է սահմանել սովորողի անկախ, ինքնուրույն, ստեղծարար մոտեցման անհրաժեշտությունը դասին, ինչպես նաև ցույց տալ ուսուցման մեթոդների ճիշտ ընտրության դերն ու նշանակությունը՝ որպես կրթական համակարգի արդիականացման բաղադրիչ՝ պայմանավորված կրթության նոր չափորոշչի պահանջներով, որտեղ դասավանդողն ու սովորողը հանդես են գալիս որպես համագործակցող սուբյեկտներ:

ԳԼՈՒԽ.1 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1.1 Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողական վարքագծի դրսևորումները դպրոցում

Այս դարաշրջանում առաջ են եկել բազմաթիվ նորարարություններ՝ այդ թվում անձի կրթությանն ու դաստիարակությանը վերաբերվող: Մարդու առաջնային պահանջմունքների շրջանակն այսօր բավականին ընդլայնվել է, ինչն իր հետ բերել է նաև նոր որակներ: Անձնային որակների շարքում նշվում են ինքնուրույնությունը, հաղորդակցվելու ունակությունը, ճշտապահությունը, ինքնազարգացման ձգտումը, որոշակի միջավայրում հարմարվելու կարողությունը: Սակայն այս ամենի հետ իրենց առանցքային նշանակությունն ունեն ինքնուրույն որոշումներ կայացնելու, արագ ու նպատակային գործելու, ինչպես նաև նախաձեռնող լինելու ունակությունները, որոնք առավել քան կարևոր հատկանիշներ են 21-րդ դարի մարդու համար: Այս համատեքստում կարևոր է ընդգծել հանրակրթական ուսումնական հաստատության դերը, որտեղ կայանում է անձի կրթական ու դաստիարակչական առանցքային գործընթացը, ուստի հենց այստեղ է մանուկը, պատանին , դեռահասը սկսում գործել ինքնուրույն, հանդես գալ նախաձեռնողի դերում:

Նախաձեռնողականությունը նորարարությունների հանգեցնող մտքերի ակունքն է: Չէ՞ որ մի բան է տարաբնույթ մտքեր ունենալ, իսկ մեկ այլ բան՝ այդ հանճարեղ մտքերը զարգացնելն ու կյանքի կոչելը՝ ձեռնարկելով հստակ քայլեր: Սա բավականին բարդ գործընթաց է: Սակայն նախաձեռնողականության հետ սերտ կապված խրթին ուղին ունի մի շարք դրական կողմեր: Այն մեկ հարթության վրա է բերում տարբեր մարդկանց՝ միավորելով նրանց հանուն մեկ գերագույն նպատակի: Նախաձեռնողականությունն է այն շարժիչ ուժը, որն առաջ է մղում ամեն մի նոր միտք դեպի իրականություն: Այն հանգեցնում է դրական տեղաշարժի՝ երկրագնդի անդադար շարժին զուգահեռ:

Պակաս կարևոր չէ ինքնուրույնությունը, որի համար անհրաժեշտ նախապայմաններ են հանդիսանում որոշման կայացումը, ներքին ազատությունը, պատասխանատվության գիտակցումը, կայացման ձգտումը, ինչին հնարավոր է հասնել գիտելիքի, մասնագիտության նախընտրության և պահանջարկի

համապատասխանությամբ, արժեհամակարգի ձևավորմամբ, մատչելի տեղեկատվության ապահովմամբ և այլն:

Ինքնուրույնության խթանման համար անհրաժեշտ է կարևորել համապատասխան մոտեցումներն ու սպասումները ինչպես տարիքային տարբեր փուլերում, այնպես էլ կրթական տարբեր աստիճաններում: Մանկության տարիներին ազատ և դերային խաղերի առաջադրմամբ երեխային կարելի է ուղղորդել, հետևել նրա ընտրության սկզբնական քայլերին, սովորեցնել պատասխանատվություն կրել սեփական ընտրության համար:

Ավելի ուշ՝ դպրոցական տարիքում, առավել կարևորվում է գիտելիքը, իմացությունը, ինչը թելադրվում է մեծի կողմից, և այս առումով ինքնուրույնության խթանումը զուգահեռ դժվար է իրականացնել: Սեփական անձի հետաքրքրությունների և ապագա մասնագիտության սկզբնական ինքնորոշման քայլերը կարող են իրականանալ վաղ դեռահասության տարիքում:

Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողական վարքագծի դրսևորումները դպրոցում կարելի է դիտարկել մի քանի տեսանկյունից: Եթե վերցնենք ուսուցչի ուղղակի ներգործությունը սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության գործունեության բարձրացման վրա, ապա հարկ է արձանագրել, որ դա մեծապես կախված է վերջինիս մանկավարժական ու անձնային որակներից: Իսկ ի՞նչ են իրենցից ենթադրում այդ որակները:

Ուսուցչի մասնագիտական որակներն են՝

- հանդուրժողականությունը, սեփական աշխատանքը ծրագրելու և կազմակերպելու, ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու, մասնավորապես ավանդական և ժամանակակից մեթոդները զուգորդված օգտագործելու, անվտանգ ուսումնական, հոգեբանական և դաստիարակող միջավայր ստեղծելու կարողություն;
- նորը զգալու և ընկալելու կարողություն, գենդերային անկողմնակալություն;
- քննադատական մտածելակերպ, սեփական գործունեությունը մշտապես վերլուծելու, վերանայելու, ճշգրտելու և կատարելագործելու ցանկություն և կարողություն;
- սովորողի իրավունքների պաշտպանի, երեխային համաձևավորողի, ուսումնադաստիարակչական գործընթացը երեխայի համար հեշտացնողի դերերը մասնագիտական բարձր որակով կատարելու ցանկություն և կարողություն;
- դպրոցի, դասարանի և նրանում կատարվող բոլոր իրադարձությունների և փոփոխությունների մասնակիցը լինելու պատրաստակամություն:

- կրթության ոլորտին և իր մասնագիտությանը վերաբերող հիմնախնդիրներին իրազեկ լինելու և դրանց լուծման ուղիների մասին սեփական կարծիք և ակտիվ մասնակցություն ունենալու գիտակցություն և կարողություն [1]:

Ուսուցչի անձնային որակներն են՝

- սերը երեխաների նկատմամբ. համբերություն, օբյեկտիվություն, անարդարության նկատմամբ անհանդուրժողականություն;
- քաղաքացիական օրինապաշտություն, քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները զուգորդելու գիտակցություն , հարգանք երեխայի ազատության և իրավունքների նկատմամբ ու դրանք պաշտպանելու պատրաստակամություն և կարողություն;
- մշտապես ինքնակրթությամբ և ինքնակատարելագործմամբ զբաղվելու գիտակցություն և մասնագիտական ու ընդհանուր զարգացումը պլանավորելու և իրականացնելու կարողություն[2]:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ կրթության ցանկացած ոլորտում անհնար է որևէ բարեփոխում իրականացնել առանց ուսուցչի մասնակցության և աջակցության: Այդ է պատճառը, որ «Հանրակրթության պետական կրթակարգ»–ում նշվում է, որ ուսուցիչը պետք է գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում իր մասնակցության կարևորությունը, ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ, կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները, մշտապես կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ:

Ստացվում է ուսուցիչն իր մարդկային ու մասնագիտական բարձր որակներով, ժամանակակից մեթոդների կիրառությամբ, սովորողի սեռատարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ կարող է հասնել հանրակրթության պետական չափորոշչով սահմանված վերջարդյունքների դրական ելքին: Ուստի և սովորողի հաջողությունը այս համատեքստում ուղիղ համեմատական է ուսուցչի մասնագիտական և անձնային որակներին, քանզի այս պարագայում վերջինս ոչ միայն սովորեցնողի դերում է, այլ նաև համակարգողի ուղղորդողի, խորհրդատուի: Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողական վարքագծի մյուս օղակը հենց սովորողն է՝կրթական համակարգի առաջնային շահակիցը: Այս պարագայում կարևոր է, որ սովորողն ինքնուրույն գա այն գիտակցմանը, որ այսօրվա ամբարած

[1] Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները», էջ 13:

[2] Նույն տեղում, էջ14:

գիտելիքը, կարողությունն ու հմտությունը իր բարեկեցիկ ապագայի հիմնասյուներն են: Սակայն հատկանշական է, որ այս գիտակցումը հաճախ ժամանակավրեպ է դառնում, քանի որ կոնկրետ ժամանակահատվածում տեղի են ունենում լրջագույն բացթողումներ:

Այս պարագայում խնդիրը պետք է դիտարկել այլ հարթության վրա: Սովորողն ունի հստակ իրավունքներ և պարտականություններ, որոնք պետք է քաջ գիտակցի: ՀՀ Հանրակրթության մասին օրենքի 20-րդ հոդվածը, որով սահմանվում են սովորողի իրավունքներն ու պարտականությունները, նշում է. «Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ:Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:Սովորողն իրավունք ունի ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն[3]: Ստացվում է, որ սովորողները հաճախ շրջանցում են օրենքով նախատեսված իրենց իրավունքը՝ հիմնավորելով, որ նոր տեխնոլոգիաներն իրենց ավելի հանրամատչելի գիտելիք են տալիս, քան ուսումնական գործընթացի ընթացքում՝ ուսուցիչը:

Անշուշտ, դժվար է համաձայնվել նմանօրինակ կարծիքների հետ,այդուհանդերձ սա ունի իր օբյեկտիվ պատճառները: Հատկապես միջին և ավագ դպրոցի սովորողները, ովքեր այս կամ այն չափով տիրապետում են ՏՀՏ գործիքներին, նոր տեխնոլոգիաներին, համացանցային տեղեկատվական հարթակներին, այլևս չեն բավարարվում դասարանային գիտելիքներով: Հենց նմանօրինակ խնդիրների լուծմամբ է պայմանավորված կրթական համակարգի արդիականացումը, նոր ու հետաքրքիր մեթոդների ու հնարների ներդրումը դպրոցում, ՏՀՏ դասերի, հետազոտական ու անհատական աշխատանքների իրականացումը, դասի ընթացքում տեսաֆիլմերի դիտումն ու տեսասահիկների պատրաստումը: Նման համալիր միջոցառումներն ունակ են ամենաանտարբեր սովորողներին բերել դեպի դասը:

Ստացվում է, որ ուսուցիչը կառավարելի է դարձնում սովորողի մուտքը համացանց՝ դա օգտագործելով ի շահ նրա: Արդյունքում՝ սովորողը կտրվում է զանազան անբովանդակ համացանցային հարթակներից՝ տեխնոլոգիան օգտագործելով տեղեկատվության հավաքագրման, ընթերցանության և այլ օգտակար նպատակներով: Նման նորորարական մոտեցումները հիմնականում արդյունավետ են աշխատում, քանի որ սովորողն ազատ ժամանակ ինքնուրույն է գործում, նախաձեռնում հետաքրքիր նախագծեր ու գենեռացնում դրանք: Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության առաջխաղացումը մեծապես կարելի

[3] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք

է կապել նաև նախագծային ուսուցման հետ: Ուսուցման նախագծային մեթոդը հետազոտական, ստեղծագործական մեթոդների համադրություն է, որի կենտրոնում սովորողն է: Այստեղ ուսուցչի մասնակցությունը սահմանափակվում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դերով: Այստեղից կարելի է եզրահանգել, որ նախագծային մեթոդի հիմնական նպատակը սովորել սովորեցնել սովորողին՝ամեն կերպ խթանելով վերջինիս ինքնուրույն գործելու, պրպտելու, գտնելու, գիտելիքը գործնականում կիրառելու, սեփական կարծիքն ու դիրքորոշումն առանց այլ ազդակների ներգործության հայտնելու կարողության ձևավորումն ու զարգացումն է : Որպես նախագծային մեթոդի վերջնարդյունք կարելի է համարել սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու,տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

Օրինակ՝ միջին և ավագ դպրոցում անգլերենի դասաժամին կարելի է իրականացնել նախագծային ուսուցում, ինչը կնպաստի սովորողների մոտ խոսքային կարողության զարգացմանը: Աշխատանքի համար խնդիր դնելով լեզվակրի հետ շփումը, հարցազրույցը՝սովորողի մոտ կարող է ավելի խորանալ հետաքրքրությունը օտար լեզվի նկատմամբ, իսկ շփման ժամանակ ճիշտ բառամթերքի օգտագործումը, հնչյունների ճիշտ արտաբերումը, անշուշտ, կնպաստի սովորողի լեզվամտածողության և ակտիվ բառապաշարի զարգացմանը:Որպես վերջնարդյունք կարելի է նկարահանել հոլովակ: Արձանագրենք այսօրինակ նախագծային աշխատանքի արդյունքում սովորողի ձեռքբերումները.

- սովորողը հաղթահարեց օտար լեզվով տվյալ լեզվի կրողի հետ շփման ընթացքում հնարավոր վախերն ու բարդույթները;
- պասիվ բառապաշարից ակտիվ բառապաշար տեղափոխվեցին նոր բառեր;
- հարստացավ բառային պաշարը;
- սովորողը կարևորեց օտար լեզվի իմացության անհրաժեշտությունը/ եթե դժվարացավ շփման մեջ/;
- սովորեց նոր հասկացություններ;
- զրուցեց օտար լեզվով իրեն հետաքրքրող թեմաներից;
- ինքնուրույն ձևակերպեց հարցադրումներ;
- աշխատանքին մոտեցավ ստեղծագործաբար:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ավանդական դասից դուրս սովորողը հնարավորություն ունեցավ համատեղել դարձնել սեփական

հետաքրքրությունները, երազանքները ուսումնառության գործընթացի հետ: Այս համատեքստում մեթոդի կիրառումը առանձնակի ուշադրության է արժանի հատկապես միջին և ավագ դպրոցներում՝ հաշվի առնելով սովորողների սեռատարիքային առանձնահատկությունները:

Այս տարիքային խմբի սովորողների մոտ հաճախ հանդիպում է անկանոն վարք, սովորելու նկատմամբ անտարբերություն, հետաքրքրության բացակայություն: Իսկ նմանօրինակ աշխատանքների ժամանակ սովորողն ակամայից ի ցույց է դնում իր ողջ աշխատանքային ներուժը, մոտիվացվում, հետաքրքրությամբ է մասնակցում դասին:

1.2 Սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացումը անգլերենի դասավանդման ընթացքում

Ստեղծագործական մտածողությունը ինչ-որ բան նորովի դիտարկելու ունակությունն է: Սովորողների ստեղծագործական մտածողության կարողությունների ձևավորումն ու զարգացումը մասնավորապես անգլերենի դասերին դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Սովորողների ստեղծագործական մտածողությունը կարևոր հանգամանք է ժամանակակից աշխարհում նորանոր հաջողություններ ունենալու, առկա խնդիրներին հեշտ լուծումներ տալու, նոր գաղափարներ իրականացնելու հարցում: Ստեղծագործական մտածողությունը պատմելու միջոցով դառնում է կարևոր, քանի որ խոսքը մարդու հոգևոր մշակույթի համոզիչ ցուցանիշ է: Ստեղծագործական մտածողությունը լավագույն միջոց է դուրս գալու կաղապարված մտածելակերպից, ընդլայնելու երևակայությունը:

Ուսումնական գործընթացքում ի թիվս մի շարք խնդիրների, հատկապես կարևորվում է ստեղծագործական մտածողության ձևավորումը պատմելու տեսակների կիրառման ճանապարհով, որը թույլ է տալիս ինքնուրույն մտածել, կարողանալ հայտնել սեփական կարծիքը և հիմնավորել այն: Անգլերենիդասաժամին ստեղծագործական ունակությունների զարգացման հիմնական եղանակներից է նյութի վերարտադրումը: Պրոֆեսոր Ջուլիետա Գյուլամիրյանը իր գրքում առանձնացնում է պատմելու հետևյալ տեսակները.

- մանրամասն կամ բնագրին հարազատ պատմել;
- համառոտ պատմել;
- ընտրովի պատմել;
- դատողություններով կամ մեկնաբանություններով պատմել;
- ձևափոխված պատմել;
- ստեղծագործաբար պատմել, շարունակելով պատմել;
- պատմել որպես մասնակից և պատմել որպես ականատես[4]:

Ձևափոխված կամ վերափոխումներով պատմելու տեսակներից է դատողություններով պատմելը: Դատողություններով պատմելիս աշակերտները սովորում են ոչ միայն պատմել փոփոխություններով, այլ նաև վերլուծել գործող անձանց կերպարները, վարքը, կարծիք կազմել նրանց մասին, հիմնավորել նրանց գործունեությունը, այդ մասին դատողություններ ու եզրահանգումներ կատարել:

[4] Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2018, էջ 163

Դատողություններով պատմելու կարողության հիմքերը դրվում են դեռևս առաջին դասարանում, երբ աշակերտներին հանձնարարվում է ոչ միայն վերարտադրել կարդացածը, այլ նաև գնահատել, մեկնաբանել գործողություններ ընթացքը, հիշել սեփական կենսափորձը, զուգորդումներ ներկայացնել այդ կապակցությամբ, վերլուծել կերպարների և գործող անձանց նկարագիրը՝ այն համադրելով իրենցի հետ, դիտարկել նրանց արժեհամակարգը, որոշել չարն ու բարին, անհրաժեշտն ու ոչ պիտանին[5]:

Մասնավորապես դատողություններով պատմելու տեսակն օգնում է սովորողի մոտ կապակցված խոսքի, ստեղծագործական մտքի զարգացմանը, բացի այդ սովորողն ինքն է կառուցում իր խոսքը. ստացվում է որ ստեղծագործական մտքի զարգացմանը զուգահեռ ամրակայվում են նաև վերջինիս լեզվական գիտելիքները:

Օտար լեզուների ուսուցման համար լեզվաբանության մեջ առկա մեթոդներից առավել հայտնի և ամենաշատ կիրառվող մեթոդները հետևյալներն են.

- ✓ ակտիվ ուսուցման մեթոդ /active learning method/
- ✓ երկլեզու մեթոդ /bilingual method/
- ✓ ուղիղ մեթոդ /direct method/
- ✓ հաղորդակցական մեթոդ /communicative method/
- ✓ քերականական-թարգմանական մեթոդ

Կարծում ենք, ակտիվ ուսուցման մեթոդը ամենաարդիականն է, քանի որ մեր օրերում առավել քան կարևորվում է լեզվի ակտիվ՝ տեսական և գործնական իմացությունը, որն էլ իր հերթին կարող է նպաստել սովորողի մոտ ստեղծագործական դրսևորումների զարգացմանը:

Անգլերենն այն միջազգային լեզուն է, որով հաղորդակցվում է աշխարհի բնակչության գրեթե մեկ չորրորդը: Այն մոտ 60 ինքնիշխան պետությունների պաշտոնական լեզուն է, ուստի այս լեզվով համապատասխան գրականության, մեդիա արտադրանքի բազմազանությունը թույլ կտա սովորողին ստեղծագործ կերպով մոտենալ առարկայի ուսումնասիրությանը: Արդեն իսկ իրողություն է, որ դասավանդման մի շարք հնարների կիրառումը ուսուցչին թույլ է տալիս կառավարելի դարձնել դասարանը: Եթե դասը հետաքրքիր է, ակտիվ , ապա սովորողը հաճույքով է մասնակցում դասին:

Պայմանականորեն դասավանդման մեթոդները կարելի է բաժանել 2 խմբի՝ ավանդական և ժամանակակից: Ավանդական ենք անվանում զննական, բացատրական այն մեթոդներին, որոնց հիմքում ընկած է գիտելիքի պարզ փոխանցումը սովորողին, իսկ ժամանակակից մեթոդական համակարգը ոչ թե

[5] Ջ. Գյուլամիրյան, մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2018., էջ 169

նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքի, հմտության, կարողության ձեռքբերում: Ինտերակտիվ մեթոդամանկավարժական հնարներից անգլերենի դասաժամին կարելի է կիրառել.

- ✓ Մտագրոհ
- ✓ Տ-աձև աղյուսակ
- ✓ Մտքերի քարտեզագրում
- ✓ Շրջագայություն անցած թեմաների էջերով
- ✓ Ձնագնդի

Նմանօրինակ հնարների կիրառումը սովորողի առաջ բացում է ստեղծագործ մոտեցումներ ցուցաբերելու լայն հնարավորություններ: Այս կերպ դասի փուլերը հստակ տարանջատվում են, լրացնում միմյանց, ինչն իր հերթին նպաստում է, որ դասարանը չկորցնի ակտիվությունը:

Ստեղծագործական ունակությունների զարգացման, ինքնուրույն խոսքի ձևավորմանը խթանող ևս մի հնար է «Դասի զեկուցող» հնարը: Այս պարզագույն հնարը շատ կարևոր դեր կարող է ունենալ սովորողներին դասապրոցեսում ընդգրկելու գործում:

Ուսուցիչն աշակերտներից մեկին նշանակում է դասի զեկուցող: Վերջինս դասի ավարտից 3-5 րոպե առաջ ամբողջ դասարանին ամփոփ ներկայացնում է, թե ինչի մասին էր դասը, ինչ արեցին, ինչ կարևոր բաներ սովորեցին[6]: Փաստորեն սովորողը հնարավորություն է ստանում սեփական դիրքորոշումը արտահայտելու, որտեղ ինքը կաղապարված չէ: Նման հնարները մոտիվացնում են սովորողներին, բորբոքում վերջիններիս հետաքրքրությունը:

Որպեսզի կիրառվող մեթոդական զինանոցը տա դրական արդյունք, հարկավոր է կառավարելի դարձնել սովորողի ուշադրությունը, ամեն կերպ բերել վերջինիս դեպի դասը: Հայտնի է, որ տեսողությունը համարվում է հիմնական զգայարաններից մեկը, որը մարդուն տալիս է շրջապատող աշխարհի մասին տեղեկատվության 90%-ը, և իհարկե տեսողական համակարգը համարվում է ամենաբարդը մյուս զգայարանների համեմատ: Նախ, տեսողական օրգանը ոչ միայն վերարտադրում է առարկան, այն միաժամանակ հաղորդում է բազմաթիվ առնչվող տվյալներ, օրինակ՝չափը, գույնը, գտնվելու վայրը, հեռավորությունը, սա հենց գործընթացի գործողությունն է: Այնուհետեւ բոլոր տվյալները աղավաղումներով ու սխալներով

[6] «Ուսուցման արդյունավետ հնարներ», Երևան 2020, էջ 38:

փոխանցվում են ուղեղին, որոնք ուղեղն ուղղում կամ լրացնում է արդեն հասանելի տեղեկատվության օգնությամբ[7]:

Հաշվի առնելով վերը նշված պնդումը՝ բավականին կարևոր են դիդակտիկ նյութերն ու ուսումնաօժանդակ պարագաները: Անգլերենի ուսուցման շրջանակներում կարելի է օգտագործել զանազան պարագաներ: Շատ դեպքերում դրանք կարող են պատրաստել հենց սովորողները, որն էլ լրացուցիչ խթան կարող է հանդիսանալ ստեղծագործական կարողությունների զարգացման համար:

Այսպիսով, ակտիվացնելով սովորողների տեսողական զգայարանը՝ ուսուցիչն ամբողջապես կենտրոնացնում է աշակերտի ուշադրությունը, նախապատրաստում վերջինիս դասին: Ուսուցիչը, անգլերենի ուսուցման շրջանակներում, շատ հաճախ կարող է ստեղծել միջառարկայական կապեր՝ թույլ տալով սովորողին խոսել իր հետաքրքրությունների մասին:

Ինչպես արդեն նշել էինք, կրթության մատչելիությունն ու հասանելիությունը հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական անկյունաքարերից են, ուստի նորագույն տեխնոլոգիաներով հեղեղված այս ժամանակաշրջանում մանկավարժի գործառույթներից է նաև սովորողին դեպի կրթություն շահագրգռելը, մոտիվացնելը, խոսուն ու գործնական օրինակներով կրթության դերն ու նշանակությունը կարևորելը, վերջինիս մոտ ինքնուրույնության, նախաձեռնողական ու ստեղծագործական ունակությունների ձևավորելը: Հենց այդ նպատակներից է բխում ուսուցչի կողմից նորագույն մեթոդներին, զանազան տեխնոլոգիական նորարարություններին դիմելն ու տարրբեր տիպի ու նշանակության դասեր իրականացնելը:

[7] https://coppershop.ru/hy/mama/5-osnovnyh-chuvstv-cheloveka-kakie-organy-chuvstv-cheloveka-i-ih-funkcii.html /հոգեբանական պորտալ/

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համակողմանի վերլուծելով ուսումնասիրության նյութը՝ կարող ենք կատարել հետևյալ արձանագրումները.

- Կրթական համակարգի արդիականացումը մեծապես պայմանավորված է նոր իրողություններով և սովորողների՝ անընդհատ զարգացող պահանջմունքներով;
- ՏՀՏ-ի զարգացումների ֆոնին նախագծային մեթոդի ներդրումը ուղղակի անհրաժեշտություն է, քանի որ թույլ կտա կառավարել սովորողների մոտ առկա տեղեկատվական հոսքերը՝ ի նպաստ կրթության որակի բարձրացման;
- Ինքնուրույնության, նախաձեռնողականության բարձրացման ֆոնին դպրոցական ծրագրով նախատեսված ուսումնական առարկաները սովորողների համար կդառնան մատչելի, կիրառելի ու հետաքրքիր;
- Փոխգործուն, ինտերակտիվ հնարների օգտակործումը թույլ կտա ուսուցչին ավելի հեշտ կառավարելի դարձնել դասարանն ու արդյունավետ վարել դասը;
- Տեսական ու գործնական բաղադրիչները արդյունավետ համակարգելու արդյունքում ուսուցիչը կկարողանա խթանել որոշակի խնդիրների նկատմամբ սովորողների հետաքրքրությունը, ինչը ենթադրում է համալիր գիտելիքների տիրապետում;
- Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողական վարքագծի դրսևորումները դպրոցում մեծապես պայմանավորված են թե' սովորողի անձնական մղումներից, թե' ուսուցչի մասնագիտական ու անձնային որակներից;
- Նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ անգլերենի դասերը էլ ավելի արդյունավետ ու կիրառելի կդառնան՝ զարգացնելով օտար լեզվի նկատմամբ սովորողների հետաքրքրությունը;
- Անգլերենի շրջանակներում հետաքրքիր նախագծային աշխատանքների իրականացումը կնպաստի սովորողների լեզվամտածողության զարգացմանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով հետազոտության ընթացքում կատարած արձանագրումները՝ բերենք մի քանի առաջարկություններ.

- ✓ Անգլերենի դասաժամի շրջանակներում կարելի է հաճախակի հանդիպումներ կազմակերպել անգլախոս հյուրերի հետ, որոնց հետ շփումը բավականին դրական կանդրադառնա սովորողների վրա;
- ✓ ՏՀՏ դասերի անգլալեզու հարթակների կիրառումը մեծապես կխթանի սովորողների գործնական կարողությունների զարգացմանը;
- ✓ Հանրային քննարկումներ իրականացնել ուսուցիչների շրջանում, անընդհատ մշտադիտարկումներ իրականացնել՝ դպրոցում անգլերենի նկատմամբ սովորողների հետաքրքրությունը բարձրացնելուն ակնկալիքով;
- ✓ Ուսուցիչների վերապատրաստումների ընթացքում կիրառել նախագծային ուսուցման մեթոդը;
- ✓ Անգլերենի դասաժամին անընդհատ նպաստել, որ սովորողները գործեն ինքնուրույն, խնդիրների լուծման ժամանակ անկաշկանդ ինքնաարտահայտվեն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները»:
2. Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2018:
3. «Ուսուցման արդյունավետ հնարներ», Երևան 2020:
4. https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք:
5. https://coppershop.ru/hy/mama/5-osnovnyh-chuvstv-cheloveka-kakie-organy-chuvstv-cheloveka-i-ih-funkcii.html /հոգեբանական պորտալ/: